

Գրախօսական

ԱՄԻՐՏՈՎԼԱԹԻ ԱՄԱՍԻԱՑԻՈՑ «ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ ԿԱՄ ԲԱՌԱՐԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՆԻՒԹՈՑ»: Ի լռյս էած համդերձ ծանօթագրութեամբ Կ. Յ. ԲԱՍՄԱՋԱՆ, Փոխ- Աստնապետ Պարխի Հայ Բժշկական Միութեան: Վերնա, տպ. Մխիթարեան, 1927: 80 էջ՝ 846, և չորս լուսատիպ տախտակներ: Գին՝ 150Փր.:

Ամիրտովլաթի այս գործը, որ հայ բժշկական դրականութեան մէջ դարադուլուի մը կը կազմէ, անախդ կը մնար իր դրութեան թուականէն՝ 1482-էն ի վեր, ուղտակում բարերար և միանգամայն հմուտ դիւանականի մը դուրդուրալի բնութեան, մասնադարաններու դարաւոր փոշիներուն տակէն դուրս կորդելու և ի լոյս ընծայելու համար դայն: Այս գործը կատարեց ծանօթ բանասէրը՝ Կ. Յ. Բասմաջեան:

Ընտիր թուղթի վրայ տպուած և չեղ տպագրութեամբ այս աշխատութիւնը կը բաղկանայ 846 երաներէ: Ամիրտովլաթի բնագիրը բռնած է 624 երես, հրատարակչին յառաջարանը — որ ածրող գործին ուսումնասիրութիւնն է, — բռնած է՝ 33 երես, նոյն հրատարակչին՝ Եւրոպացոց համար դրութեան Փրանսերէն ընդհանուր ակնարկ մը՝ 45 երես, դարձեալ հրատարակչին կողմէ գրքին վերջը դրութեան չորս Բառացուցակներ՝ 338 երես:

Այս բառացուցակները անհրաժեշտ էին գիրքը կարենալ օգտագործելու համար: Անոնցմէ առաջինը կը պարունակէ գրքին մէջ յիշուած բոլոր դեղաբանական բառերը, այլուրեքական կարգով շարուած. իւրաքանչիւր բառ դրուած է իր համարին: Երկրորդ բառացուցակը կը ներկայացնէ՝ Ամիրտովլաթի դարձանոթ բոլոր հիւանդութիւնները, որոնց առջև դրութեան թիւերը կը դրկեն հրատարակչին կողմէ բնագիրին մէջ նշանակուած համարներուն: Երրորդը՝ Ամիրտովլաթի յիշատակած բոլոր յատուկ անուններն են. իսկ չորրորդը՝ դժուարիմաց կամ զանաւորձ քառերու Փրանսերէն մեկնութիւններն են:

Գրքին գործածութիւնը աւելի օգտակար ընծայելու համար պը. Բասմաջեան իր կողմէն աւելցուցած է բոլոր դեղաբանական և փաստաբանական անուններու Փրանսերէն համադրները:

Վերջը դրութեան է նաև վեց տախտակ, Ամիրտովլաթի գանադան ձեռագիրներէն վեց լուսատիպ նմայնի ցուցնող:

Անկարելի է ճշգրտութեամբ սեղմ էջերուն մէջ մանրամասնօրէն վերլուծել Ամասիացի Հայ բժշկին այս թանկագին գործը, որու դիւանական արժէքի մասին նախապէս արտայայտուած են նաև Փրանսացի ծանօթ բժշկներ:

Ինչպէս կ'իմանաք, 700 օրինակ միայն տպուած է և մէկ մասը միայն պիտի արամադրուի հանրութեան: Կ'արժէ ուշենալ օրինակ մը այս շահեկան գործէն, որու ընթերցանութիւնը ջերմապէս կը յանձնարարենք մեր ընթերցողներուն: